ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1554

26.06.2015թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն Վ. Գասպարյանին

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՏՍԲ
ՄՏՊԳ № 2982
30 06 2015թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

<< Ոստիկանության Քաղաքացիական
Մտից թիվ 4288
30 06 2015թ.

Սույն թվականի հունիսի 8-ի Դիտորդական խմբի թիվ 2621/1549 գրությանը տրված Ձեր 16.06.2015թ-ի թիվ 2/2-1-1973 մեկնաբանությունը քննարկվել է Դիտորդական խմբի հերթական նիստի ընթացքում: Դիտորդական խմբի անդամները համաձայն չեն տվյալ մեկնաբանության որևէ մի կետի հետ և նշված փաստերը հիմք չէին տալիս հեռացնել Դիտորդական խմբի պաստառները համապատասխան վայրերից, փակցնել, նոր՝ նույնաբովանդակ պաստառներ հրատարակված ոստիկանության կողմից և ոստիկանության կողմից օգտագործել Դիտորդական խմբի թեժ գիծը:

Կրկին անգամ նշում ենք, որ Դիտորդական խմբի պաստառները միտումնավոր են հանվել համապատասխան բոլոր վայրերից, որովհետև բովանդակային առումով ոչինչ չի փոխվել բացառապես մի քանի բառերի:

Դիտորդական խմբի կողմից արդեն տպագրված և օգտագործվող պաստառները, փոխարինել ոչ մի առավելություն չունեցող Ձեր կողմից տպագրված պաստառներով և ՀՀ հարկատուների և պետական բյուջեի հաշվին ավելորդ միջոցներ ծախսելը, չունի ոչ մի բացատրություն, եթե ոչ կամայական քայլ:

Իսկ ինչ վերաբերվում է այն մեկնաբանությանը, որ Դիտորդական խմբի թեժ գիծը տվյալ պաստառում կամ ոստիկանության կողմից որևէ այլ նպատակով օգտագործելու համար պետք չէ որևէ մեկի համաձայնությունը կամ թույլտվությունը, որովհետև այն օգտագործվում է Դիտորդական խմբի պաշտոնական կայք էջում, Դիտորդական խումբը կարծում է, որ դա ողջամիտ մեկնաբանություն չէ, որովհետև Դիտորդական խմբի պաշտոնական կայք էջը

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

հանդիսանում է Խմբի սեփականությունը և Խմբի վերաբերյալ հասարակությանը իրազեկելու աղբյուրը:

Այսպիսով՝ Դիտորդական խմբի անդամները խնդրում և պահանջում են.

1. նույն վայրերում, որտեղ որ փակցված է եղել Դիտորդական խմբի պաստառները կրկին փակցնել անգամ՝ Ձեր պաստառների կողքին
2. ՀՀ ոստիկանության կողմից հրատարակված պաստառներից ***անհապաղ*** հեռացնել Դիտորդական խմբի թեժ գծի հեռախոսահամարը:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված
անձանց պահելու վայրերում վերահսկողություն
իրականացնող հասարակական
Դիտորդական խմբի անդամներ

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2293 << 14 >> 07 2015թ.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հ.Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ձեր 26.06.2015թ. թիվ 2621/1554 գրությանը հայտնվում է, որ գրությունում նշված հարցերին ՀՀ ոստիկանության կողմից 16.06.2015թ. թիվ 2/2-1-1973 գրությամբ արդեն իսկ տրվել են սպառիչ մեկնաբանություններ:

Հարկ է նշել, որ ՀՀ ոստիկանության կողմից պաստառները պատրաստելու և տպագրելու համար հարկատուների ու պետական բյուջեի հաշվին ավելորդ գումարներ չեն ծախսվել և նման հարցերը դուրս են դիտորդների խմբի իրավասության սահմաններից: Այնուամենայնիվ տեղեկացնում ենք, որ ՀՀ ոստիկանության համակարգում գործում է տպագրատուն, որտեղ առանց պետական բյուջեի գումարները ծախսելու տպագրվել են նշված պաստառները:

Միաժամանակ ՀՀ ոստիկանությունը հորդորում է դիտորդների խմբին իրենց հաշվետվություններում ապատեղեկատվություն չներկայացնել և չապակողմնորոշել հասարակությանը:

Ինչ վերաբերվում է դիտորդների խմբի թեժ գծի հեռախոսահամարը ոստիկանության կողմից պատրաստված պաստառներում նշելուն, ապա այն արվել է այն նպատակով, որպեսզի ՁՊՎ-ներում պահվող անձինք և նրանց հարազատները իրազեկված լինեն և անհրաժեշտության դեպքում, որպես ոստիկանությունից անկախ մարմին, դիմեն դիտորդների խմբին՝ իրենց իրավունքների պաշտպանության համար: Նույն սկզբունքով էլ պաստառներում նշվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի թեժ գծի հեռախոսահամարը, որը ևս մեկ առավելություն է դիտորդների խմբի պաստառների համեմատ:

Դիտորդների խմբի կողմից տրամադրված պաստառներն ոստիկանության բաժինների հերթապահ մասերում և ՁՊՎ-ներում դարձյալ փակցնելը անիրատեսական է և քանի որ դիտորդների խումբը պնդում է ոստիկանության կողմից պատրաստված պաստառներից հեռացնել իրենց թեժ գծի հեռախոսահամարը, ապա ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչություններին կհանձնարարվի ենթակա ստորաբաժանումների հերթապահ մասերում և ՁՊՎ-ներում փակցված պաստառներից հեռացնել այն:

Միաժամանակ հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ՀՀ ոստիկանությանը իրենց աշխատանքները խոչընդոտելու, պաստառները միտումնավոր հանելու մեջ անհիմն և ավելորդ մեղադրանքներ չներկայացնելու համար՝ ՀՀ ոստիկանությունը ընդառաջելով Ձեր խնդրանքին,

այլ ոչ թե պահանջին, իր պատրաստակամությունն է հայտնում ՁՊՎ-ներ ունեցող տարածքային ստորաբաժանումների նախասրահներում փակցնել դիտորդական խմբի <<Թեժ գծի>> հեռախոսահամարը:

ՀՀ ոստիկանության շտաբ